

Гуржур
Ушн
Урх/зжн.

891.99

2-39



19 NOV 2011

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

ՍԱՔՈ
ՄԻԿՐՆՅԱՆ

1935

891.99
9-42

um



ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1935

ՅԵՐԵՎԱՆ

13689-57

391.99

2.42

"Y"

ՍԱՔՈ ՄԻԿՆՅԱՆ

Բռնեցեք, փախալ Սաֆոն խեղագար...

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կոլեկտիվ բերքի հսկա գեղի մոտ
 Պահակ է կանգնած Միկինյան Սաքոն:
 Լուսինը ծածկեց յերեսը քընոտ
 Վաթարն մետրանոց ամպե վերմակով:
 Կորավ խավարում ճամբան քարքարոտ,
 Վոնց վոր քրքրված կանեփե չվան:
 Խավարը ծածկեց անտառ և արոտ՝
 Միլիոն մետրանոց վերմակի նման:
 Կանգնած է Սաքոն արթուն պահապան
 Կոլեկտիվ բերքի յերկնաքեր սարին,
 Ծավալում է լուռ գիշերն անխափան
 Ծրագիրն իրա մութ ու վիթխարի:
 Դեղի չորս բոլոր մոտիկ ու հեռու
 Վխառում է գիշերն ինչպես թշնամի:
 Ու փափառու է շշուկ և բերում,
 Մթնում ման յեկող գիշերվա քամին:
 Ո՞վ է գիշերվա այս խավար ժամին,
 Թափառում դրսում զգուշ, նենգավոր,
 Ու մատներն ամուր սեղմած հրացանին՝
 Ծրջում է Սաքոն գեղի չորս բոլոր:

Սրբազրեց՝ Ա. Քալաշյան

Հանձնված է արտադրություն 4 մարտի 1935 թ.

Ստորագրված է տպագրություն 10 մարտի 1935 թ.

Գումար 105. Հրատ. 3273. պատվեր 254. տպագր. 3000

Գ. Գ. Գ.

Ու հետո կրկին կանգնած դեզի տակ՝
 Խավարն է դիտում տաղնապախուով:
 Գյուղն է դեմ ու դեմ հտպիտ, ալյանդակ—
 Խավարին ձուլված իր չարդախներով:

2

Նայում է Սաքոն անձև խավարին—
 Ու խավարի մեջ նշմարում է նա
 Իր տունը՝ շինած հին գյուղի ծայրին
 Նոր թաղամասի պլանի վրա:
 Փակ է: Լույս չկա լուսամուտներում:
 Իր սիրուն Սաթոն գնացել եր սար՝
 Կոլխոզֆերմայում վոչխար կթելու,
 Աշխոր անելու մարդուն հավասար:
 Ժպտում է Սաքոն... հպարտ է Սաքոն:
 Ամբողջ իր կյանքում յեղել է հոտաղ,
 Յերազել է զուր սեփական մի կով,
 Սեփական յեղներ, սեփական ռքախ...
 Իր նոքարական ստոր վիճակից
 Նա վեր բարձրացավ դարձավ դրազետ:
 Ու հենց վոր յեկավ կարմիր բանակից
 Կոլեկտիվ մտավ մոր ու կնոջ հետ:
 Դիմացավ բոլոր սուր քամիներին,
 Վոր յեկան անցան կոլխոզի գլխով:
 Աշխոր չատ արավ և անցլայ տարի
 Նոր տուն կառուցեց և գնեց մի կով:
 Յեվ կովի համար խոտ քաղել Սաքոն,
 Դիզել է՝ սիրուն իր քարե տան քով:
 Յեվ նանն ու Սաթոն գնացել են սար,

Աշխոր են անում նրան հավասար:
 Իսկ ինքը, Սաքոն, հսկում է արթուն
 Կոլեկտիվ բերքի առաջին դեղին:
 Ու յերիտասարդ պահակի սրտում,
 Հրճվանք ու տաղնապ իրար ձուլվեցին:

3

Տաղնապախուով կանգնած է Սաքոն
 Յերկու դեղերի սահմանագծում:
 Կայծակը հեռվում իր չեկ մտրակով
 Սարի վիթխարի կողերն է ծեծում:
 Կողքին կոլխոզի դեզն է սարի պես
 Պահակն է Սաքոն այդ հսկա սարի:
 Իսկ հեռվից ուրիշ մի տուն ու մի դեզ
 Կանչում է նրան. ասում են արի...
 Արի աչք ածի, գող է մտել տուն,
 Մոլորված մողին քո խոտն է ուտում,
 Կուլակն է չրջում, վոր դեզդ վառի...
 Այսպես են կանչում նրան խավարից...
 Չեմ գա, մի կանչի,—ասում է Սաքոն,
 Սիրտ մի պղտորի, պստիկ սատանա,
 Տես կանգնած է սա սարի հասակով...
 Իսկ ձեզ, թզուկներ ո՞վ կմոտենա:
 Բայց կոլխոզի դեզն այրելու համար
 Կճարեն, նրանք և՛ սիրտ և՛ բենդին...
 Ու կայծակն իրա խարազանը վառ
 Խաղացրեց մթնում մեկի յերեսին:
 — Ո՛վ է գիշերով մոտենում դեզին,—
 Չայն տվավ Սաքոն ամպի վորոտով:

Փախչող քայլերի ձայներ լսվեցին,
 Սովերներ անցան չափառի մոտով:
 Սաքոն կատաղի յետևից վազեց
 Ու դարձավ ելի... բան չի յերևում,
 Կայծակն այս անգամ գիշերը կիսեց
 Սաքոյի փոքրիկ դեղի վերևում:
 Ու խռովահույզ լսում է ... ելի...
 Այն ուլ է սուլում... քամի՞ն է հիմար...
 Թե սև թչնամին նշան է տալիս
 Կոլեկտիվի դեզն այրելու համար:
 «Տաս դեղակ ունեմ, փորն եմ չարեւու,
 Հապա թող դեղին մեկը մոտենա՞...»—
 Սաքոն ինքնիրեն դաժանվում է լուռ
 Ու դեղի բոլոր չըջանում է անահ:

4

Կայծա՞կն է արդյոք... նայիր, տես Սաքո...
 Կայծեր են թռչում... ի՞նչ է պատահել:
 Ծուխ է բարձրանում ահեղ հասակով...
 Սաքո քո փոքրիկ դեզն են հրդեհել:
 Ու Սաքոն խայթված պոկ յեկավ աեղից՝
 Վոնց վոր սարից վար գլորվող մի ժայռ...
 Կաց,—մի ձայն սրտում գոռաց կատաղի,—
 Սպասիր, Սաքո, սպասիր... յե՛տ դառ...

 Թվաց մի բռպե—կոլխեղի դեղի
 Հրդեհից արդեն յեկինքն է չիկնել...
 Ու խավարի մեջ, մութ, ժանտատեսիլ,
 Վխտում են անթիվ հրդեհածիզներ...

Յե՛վ գնդակահաբ գաղանի նման
 Նա մոնչալով յետ վերադարձավ
 Ու հսկա դեղի շուրջը մանեման
 Պատվեց ինչպես ահավոր կայծակ:
 Վոչ վոք չերևաց խարդախ խավարում
 Բացի խավարից կույր ու անգլուման:
 Դեզը կանգնած է մենակ պաղարյուն,
 Մահն արհամարհող հսկայի նման.
 Իսկ մի քիչ հեռու մութն է պատռվել,
 Վոճիրն է շնչում կեսգիշերային:
 Կայծերը ցրում, թուցնում է վեր
 Հրդեհների ձախ ուղեկից քամին:
 — Հե՛յ հե՛յ... ոգնեցե՛ք... ոգնեցե՛ք...
 ոգնեցե՛ք...—

Կանչում է Սաքոն վոնց վոր խելագար:
 Բայց նրա կանչին իբրև պատասխան՝
 Շներն են միայն հաջում ահաբեկ:
 —Եյ... կոլխոգնիկնե՛ր... ընկերնե՛ր...
 Ալե՛ք...
 Կուլակներն այստեղ դեղ են հրդեհում:
 Վառվում է տունս, նոր տունս, հասեք...
 Գոռում է Սաքոն, գոչում է... բայց ո՞ւմ...
 Քամու, ամպերի սայլուլորոտում
 Խլանում է սուր տագնապը նրա,
 Կրակում է նա, դեպի գյուղ, ողում,
 Կրակում է նա հրդեհի մրա:
 Վոչ վոք չի լսում...: Այս ահեղ ժամին,
 Յերբ ծառերի հետ վիճում է քամին,
 Կայծակն է չողում պատուհանի մոտ,

Ամպն է տրաքում ահեղավորոտ,—
 Քաղցր է այդ հզոր աղմուկի ժամին
 Տանը քնանալ անխռով, խորունկ,
 Մոռանալ մի պահ, վոր սե թշնամին
 Շրջում է հիմա դրսի ժխորում:
 Քաղցր է այդ էամին քնել՝ բեղարած
 Որվա պայքարից ու աշխատանքից:
 — Հեյհե՛յ... նետվում է Սաքոն յետ առաջ.
 Բայց դյուղը հեռվում լուռ է հանգիստ:
 — Հեյհե՛յ... Սաքոյի ձայնը խռպոտած
 Յետ է դարձնում դյուղի մոտ քամին,
 Առնում ու զոռով փախցնում է դաշտ,
 Վոր չհասնի վոչ մի բարեկամի:

5

Վոչ վոք չի՞ լսում տաղնապրդ, Սաքո՛,
 Վոչ վոք չի՞ տեսնում տաղնապրդ ահագին.
 Վառվում է ենտեղ դեզն ու տունը քո,
 Դու քարացել ես պոստում սլահակի:
 Գուցե բոցն արդեն հարձակվել է ներս
 Կանաչ փեղկերից—վայրի կատվի պես,
 Ու պարզած իր թեժ, իր աղահ լեզուն՝
 Քո հարսանիքի սնդուկն է լիզում...
 Բոցերը գուցե մազլցում են վեր
 Ոձերի նման վոլոր, կատաղի...
 Վաղուց են գուցե նրանք լաթաթվել
 Հաստ գերաններին քո առաստաղի:
 Վողջը կդառնա կրակի բաժին.
 Սեղան, մահճակալ, դորդ ու տեղաչոր,

Վոչինչ կմնա պատերից բացի,
 Կդառնաս կրկին յետին չքավոր:
 Հերիք է, Սաքո, հասիր ոգնության,
 Սաստկանում է, տես, արիկա քամին,
 Յրիվ է տալիս կայծերը քո տան
 Թանձր խավարում՝ զործող թշնամին...
 Ու Սաքոն կրկին պոկվելով արագ
 Թռչում է դեպի տունը սեփական,
 Բայց կանգ է առնում՝ քսան քայլ չարած՝
 Լսելով ներքին մի յերկաթե ձայն,
 Սպասի՛ր... լսի՛ր... լքո՛ւմ ես, Սաքո...
 Դալամանո՛ւմ ես քո բրիզադին...
 Նա, վոր հրդեհեց դեզն ու տունը քո,
 Սպասում է դեռ մթում դավադիր:
 Նա կրակ տվեց այն փոքրիկ դեղին,
 Վոր այս մեծը դու լքե՛ս, հեռանա՞...
 Բայց ո՞ւմն է, Սաքո, դեզը կոլխողի,
 Յեվ ո՞վ է այնտեղ մթնում դարանած:
 Յեվ նա կատաղի մի պտույտ արավ
 Հսկա դեզի շուրջը—ահեղ փնչոցով—
 Վոնց խոցված գազան մի վորսի ծալքով,—
 Բայց լուռ է... մթնում չի շարժվում վոչ վոք:
 Հրդեհն է միայն պատում անարդել
 Ամպոտ դիշերվա վարազույրը մութ,
 Փոքրիկ խոտի դեզն արդեն ճարակել,
 Բռնել է արդեն դուռ ու լուսամուտ:
 Բոցն է բարձրանում աղաղակի պես,
 Կայծերն են ճայթում նման ճիչերի,
 Անսիրտ Սաքոյին կանչում են ասես,

Ասում են, Սաքո, ողնուխյան արի...
 Մի՛ գնա Սաքո,— ձայնում է ելի,
 Սրաի խորքերից ուրիշ մի Սաքո—
 Թշնամին է քեզ կանչում, ձայն տալիս,
 Վոր դու մոլորվես, լքես պոստը քո,
 Վառվում է այնտեղ մի բուռ խոտի դեղ,
 Գուցե և փոքրիկ տունդ սեփական,
 Բայց այստեղ, Սաքո, լեռնացել է, տես,
 Քո ընկերներին և քո ապագան...
 Այստեղ է դիզվել քո բրիգադի
 Քրտինքը, կյանքը, տանջանքը ազնիվ,
 Այստեղ է Սաքո, կոլխոզի պատիվն
 Ու հաղթանակը քո սոցիալիզմի...
 Հիշում է Սաքոն, կարծես յերազում,
 Գարնանացանի որերը դաժան,
 Յերբ վոր կիսաքաղց մարդ և անասուն
 Պայքարում էին հողից անբաժան:
 Յե՛վ այդ պայքարի բերքը սրբազան
 Սարի պես այսօր դիզված է կարում:
 Մարդիկ վստահել, ընտրե՛լ են նրան՝
 Այս յերկնակառկար դեղին հսկելու:
 Սա ուժն է, Սաքո, քո բրիգադի,
 Սա սոցիալիզմի բերքն է յերկնահաս:
 Պաշտպանիր, Սաքո, այսպիսի պատիվ,
 Քիչ հերոսների համար է պահած:
 Թող տունըդ վառվի, թող վռոնա քամին,
 Թող սիրտդ վառվի տանըդ բոցերում,
 Զովի, ամբանա, վոր չար թշնամին
 Ել տեղ չգտնի նրան խոցելու...

Ու յերազում է Սաքոն խավարում
 Հաղթական ժպիտն ընկեր Ստալինի:
 «Տեսե՛ք,— կասի նա,— վո՛նց են պայքարում,
 Կոլխոզնիկն, ահա, այսպես կլինի...»

— Հե՛յ-հե՛յ ողնեցե՛ք... — կանչում է Սաքոն
 Վերջին ճիչերով խռպոտած բլի...
 Մնացել է միայն յերեք գնդակով,
 Ել ինչպե՛ս ողում իզուր արձակի:
 Ինչպե՛ս արձակի... շուրջը, գիշերում,
 Վխտում են անթիվ հրդեհաձիգներ,
 Ու լուցիկ պահած՝ համառ համբերում,
 Վոր նա արձակի վերջին գնդակն ե՛լ
 Ու խելադարված նետվի դեպի տուն,
 Վոր սեփական տան կրակը մարի,
 Թողնի անպաշտպան ամայի դաշտում
 Այս կոլխոզական բերդը վիթխարի:
 Նայում է Սաքոն մարմող կսկիծով
 Իր տան բոցերին յերկինքը լիզող:
 Մի հարց է սրտում մորմորում անձե,
 Վորտե՞ղ է Սաքոն... այստե՞ղ, թե՛ այնտեղ
 Ախ՛, մինչև հիմա կար յերկու Սաքո,
 Մեկն այստեղ մնաց— իր պոստի վրա,
 Իսկ մեկը հիվանդ, խելադար հոգով
 Սլացավ այնտեղ ու նետվեց կրակ...
 Այրվում է նա իր տան բոցերով
 Ու մի քիչ հետո կդառնա մոխիր...
 Իսկ սա կանգնած է դաժան ու հերոս,

Ու դաւին ե ծաղրում ստոր վոսոխի:
 Ե՛ր... կայծակն ելի հրեղեն մատով
 Պատռեց վարագույրն անհուն խավարի
 Մի սովեր անցավ չափարի մոտով.
 —Ո՞վ ես...—վորոտաց Սաքոն,— մո՛տ արի...
 Բայց մարդը փախավ, ձուլվեց խավարին
 Ու չարագուշակ սուլեցին հեռվում...
 Չոքում ե Սաքոն տագնապով արի
 Ու սուլոցներին նշան ե բռնում:
 Վորոտաց գնդակն ու կայծակն ելի
 Պատռեց գիշերվա դիմակն անթափանց:
 Տեսավ նա կրկին կոխողի կալի
 Ծուրջը ժուռ յեկող մի քանի մարդկանց:
 Հեռվում կայծ ու բոց ելի սաստկացան,
 Տունը փուլ յեկավ ճայթ ու վորոտում,
 Ու չորս կողմ հազար թրերի նման
 Կայծակները շեկ մուխն են թրատում:
 Նորից ե Սաքոն կրակում, գոռում
 Ու տագնապահույզ նետվում դեռ ու դեն
 Վերջապես քամու, ամպի ժխորում
 Ծանոթ ձայներ ե լսում նա արդեն,
 —Սաքո՛... տնաքա՛նդ... նոր տունդ վառվեց
 Ի՛նչ ես քարացել, կանգնել դեղի մոտ...
 Մեկը կարեկից՝ մթնում ձայն տվեց
 Ու հավաքվեցին տղերք վարանոտ:
 — Վառվեց... յես տեսա... վառվեց... ի՞նչ
 անեմ...—

Մղկտաց Սաքոն հոգնած ու դաժան,—
 Տունըս վառեցին իմ աչքերի դեմ...

Յեվ յես չհասա տանս ողնության...
 Ընկերներն այդ նոր մեծ հերոսության
 Առջև խոնրհված մտածում են լուռ:
 Նրանք արժանի խոսքեր չգտան
 Իրենց հերոսին փառաբանելու:
 Միայն նախագահն զգուշ իմկմաց
 Մխիթաբանքի մի քանի խոսքեր.
 —Սաքո՛, քո անցնիլ արարքի դիմաց
 Քեզ կտանք և տուն, և հագժւատ, և կե՛ր:
 — Ինձ,— պատասխանեց Սաքոն, ծանրաձայն
 Միրտ ամբասցնելու բաներ մի խոսի...
 Յես նոր հասկացա ես գիշեր մի բան.
 Պաշտպանել եմ յես իմը՝— կոխողի՛նն:





ՀՀ Ազգային գրադարան



NL0335504

29463